# Մրցույթի հայտարարություն

ՀՀ Սյունիքի մարզի «**Բռնակոթի միջնակարգ դպրոց**» ՊՈԱԿ -ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 2-րդ կետի համաձայն «Շաքիի միջնակարգ դպրոց» և «Բռնակոթի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ների կոլեգիալ կառավարման մարմինը՝ միացյալ խորհուրդը՝ հայտարարում է մրցույթ տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը,

2) ուսումնական հաստատության կառավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են «**Բռնակոթի միջնակարգ դպրոց**» ՊՈԱԿ –ում **2022 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև սեպտեմբերի 22-ը ներառյալ ամեն օր՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 15.30-ը**, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2022 թվականի** հոկտեմբերի 6-**ին** ժամը **13:00**-ին «Բռնակոթի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ –ում: Հասցե՝ Սյունիքի մարզ գ. Բռնակոթ, Վուրգ Ոսկանյան փ., շենք 6

Տեղեկությունների համար դիմել՝ խորհրդի կողմից լիազորված անդամ Ոսկեհատ Բարսամյանին: Հեռ՝. 094 43 35 80, էլ. հասցե՝ brnakot@schools.am: